

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԵՐԿՐԱԹՄԱՆ ԱԿԱԴ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԱԳՑԱՆ ԱՐԱ ՎԱՐՈՒԺԱՆԻ

ԱԿՏԻՎ ԽՁՎԱԾՔՆԵՐԻ ՄԵՐՉՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԻԴ.01.01 Ռեգիոնալ երկրաբանություն, երկրատեկտոնիկա, հնէաբանություն  
և շերտագրություն մասնագիտությամբ երկրաբանական գիտությունների  
դոկտորի զիտական աստիճանի հայցման ատենախոսության

Երևան – 2013

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК

АВАГЯН АРА ВАРУЖАНОВИЧ

БЛИЗПОВЕРХНОСТНЫЕ ПРОЯВЛЕНИЯ АКТИВНЫХ  
РАЗЛОМОВ В ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени доктора геологических наук по  
специальности 24.01.01 Региональная геология, геотектоника, палеонтология и  
стратиграфия

Ереван - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների  
ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Սարգսյան Հռոմիկ Համայակի, Է.-հ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ,

Ալոյան Պետրոս Գևորգի, Է.գ.դ., «ԳԵՈՒԴ»,

Նազարեթյան Սերգեյ Նորայրի, Է.-հ.գ.դ., ՍՊԱԾ ՀԴ տնօրեն:

Առաջատար կազմակերպություն՝ ԳԱԱ Ա.Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և  
ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ


Պաշտպանությունը կայանալու է 2013թ. հոկտեմբերի 8-ին, ժամը 13<sup>00</sup>, ՀՀ ԳԱԱ  
Երկրաբանական գիտությունների ինստիտուտում գործող թ. 054 «Երկրաբանություն»  
Մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0019, Մարշալ Բաղրամյան պող., 24ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների  
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 07.08.2013թ.

Թիվ 054 Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,  
երկր.-հանք. գիտ. թեկնածու



Հ.Վ. Շախինյան

Тема диссертации утверждена в Институте геологических наук НАН РА

Официальные оппоненты:

Саргсян Охмик Амаякович, д.г.-м.н., профессор, ЕГУ,

Алоян Петрос Геворгович – д.г.н., “ГЕОИД”,

Назаретян Сергей Норайрович, д.г.-м.н., директор СД НССЗ.

Ведущая организация: Институт Геофизики и инженерной сейсмологии имени А. Назарова  
НАН РА.


Защита диссертации состоится 8 октября 2013г., в 13<sup>00</sup>, на заседании Специализированного  
совета 054 “Геология” при Институте геологических наук НАН РА.

Адрес: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24а.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ИГН НАН РА.

Автореферат разослан 07.08.2013г.

Ученый секретарь Специализированного совета 054,  
кандидат геол.-мин. наук



Г.В.Шагинян

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետության և հարակից տարածքների համար ամենաադեռալի բնական վտանգների՝ երկրաշարժերի, նրանց առաջացնող ակտիվ խզվածքների, մակերեսային խախտումների դրսևորումների, երկրորդային ազդեցությունների համալիր ուսումնասիրության խնդիրներին, ներառելով Մարոկոյում, Եգիպտոսում և Հայիթիում իրականացված նմանատիպ ուսումնասիրությունների որոշակի արդյունքները:


Երկրաշարժի վտանգի գնահատման ճշգրտության բարձրացումը կարևոր հիմնահարց է, քանի որ նրա թերագնահատումը կարող է բերել նյութական և մարդկային ռեսուրսների չարդարացված կորուստների, իսկ գերագնահատումը բերում է հսկայածավալ ծախսերի ավելեցման՝ հանգեցնելով հասարակության զարգացման տեմպերի նվազեցմանը: Խնդրի այժմեականությունը և գործնականությունը հակում ունեն անընդմեջ սրացման, կապված մարդկային, նյութական, մասնավորապես էներգետիկ ռեսուրսների կենտրոնացման ու կարևորման հարաճուն բնույթի հետ:

## Ուսումնասիրությունների մեթոդները

Հետազոտությունների տեսակները և օգտագործված մեթոդների համառոտ ցանկը հետևյալն է.

- տեկտոնական, սեյսմատեկտոնական, երկրաբանական և այլ բազմաբնույթ տվյալների հավաքում և խաչաձև վերլուծություն,
- տարբերակման մակարդակի թույլատրելիություն ունեցող հեռագնման տվյալների (աներոլուսանկարների և արբանյակային պատկերների), տեղագրական քարտեզների մշակում, եռաչափ մոդելավորում և վերլուծում, ակտիվ բեկվածքների, հնարավոր մակերեսային խախտումների և այլ կառուցվածքային տարրերի անջատում,
- ակտիվ խզվածքների հիմնական պարամետրերի՝ նրանցից բխող վտանգների առավելագույն մագնիտուդի և կրկնման պարբերականության գնահատում, ակտիվ խզվածքների վարքի բնութագրում՝ լայնորեն կիրառելով հնասեյսմաբանական, արխեոսեյսմաբանական դաշտային հետազոտությունների, ինչպես նաև հասակագրման իզոտոպային, լյումինեսցենտային (լուսափայլման) և հնագիտական մեթոդները,
- երկրաշարժերի երկրորդային ազդեցությունների, մասնավորապես՝ սողանքային և այլ լանջային երևույթների, հողերի ջրիկացման, ակտիվ խզվածքների և հրաբխականության հնարավոր փոխադարձ կապերի բացահայտում և գնահատում՝ կիրառելով ինժիներաերկրաբանական քարտեզագրման, մերկացումների մանրամասն նկարագրման (կտրվածքների կազմում, լուսանկարում, երկրաբանական և կառուցվածքային միավորների

2037



առանձնացում, նմուշարկում, և այլն) և ռետրոսպեկտիվ վերլուծության մեթոդները,

- Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (USZ) և թվային ֆորմատով տվյալների բազայի ստեղծում, համալիր վերլուծություն:

### **Աշխատանքի հիմնական նպատակը**

Միջավայրի վրա ակտիվ խզվածքների ազդեցության բացահայտումը և մակերեսային խախտումներից բխող վտանգի գնահատումը:

### **Աշխատանքի հիմնական խնդիրները**

1. Մակերեսային խախտումների բաշխվածության և ակտիվության բնութագրումը:
2. Ակտիվ խզվածքների մերձակերեսային արտահայտվածության ուսումնասիրությունը:
3. Միջավայրի վրա խզվածքների ակտիվության պատճառահետևանքային ազդեցությունների ուսումնասիրությունը:

### **Նևտրի կարևորությունը և արդիականությունը**

Թե՛ պատմական, թե՛ այօրվա Հայաստանի համար բնական աղետներից ամենակործանարար հետևանքների հանգեցնում են ուժեղ երկրաշարժերը: Հայաստանի պատմական մայրաքաղաքները բազմիցս ենթարկվել են ավերման:

Ավերիչ սեյսմիկ ակտիվության ժամանակակից իրադարձությունները՝ 1976թ. Չալդիրանի (M7.1), 1983թ. Նորանի (M6.8), 1988թ. Սպիտակի (M7.0), 1991թ. Ռաչայի (M7.0), 1990թ. Ռուտբար-Մանջիլի (M7.3) և 2011թ. Վանի (M7.2) երկրաշարժերը վկայում են ՀՀ և հարակից տարածքների բարձր սեյսմիկ վտանգի և ռիսկերի մասին:

Վերոհիշյալը թույլ է տալիս հանգել հետևության, ըստ որի, եթե անցյալում տեղի են ունեցել աղետալի երկրաշարժեր, ապա դրանք սպասելի են ապագայում նույնպես, հետևապես՝ սեյսմիկ վտանգի և ռիսկերի ճշգրիտ գնահատման և, համապատասխանաբար, ռիսկերի կառավարելիության, խոցելիության նվազեցման խնդիրները դառնում են խիստ անհրաժեշտ և արդիական:

Երկրաշարժերի հետևանքները կարող են լինել անկանխատեսելի և անսպասելի, հատկապես երբ ազդեցության տարածքում կա այնպիսի երկրորդային տեխնածին վտանգի աղբյուր, ինչպիսին ատոմակայանն է (Ճապոնիայի երկրաշարժի օրինակը): Հայաստանի տարածքը ամբողջովին սեյսմավտանգ է և մենք պարտավոր ենք սթափ գնահատել սեյսմիկ պաշտպանության դերը մեր երկրի կայուն զարգացման համար:

Սեյսմիկ ռիսկի (ուժեղ երկրաշարժով պայմանավորված մարդկային և նյութական կորուստների) նվազեցման համար անհրաժեշտ են մշտադիտարկումը, սեյսմիկ վտանգի գնահատումը, սեյսմակայուն շինարարությունը, բնակչության ուսուցումը և կառավարման մարմինների պատրաստվածությունը:

Մեյսմիկ վտանգի գնահատումը, ընհանուր առմամբ, երկրաբանական խնդիր է (ներառելով երկրաֆիզիկականը): Այստեղ է, որ ռազմավարական կարևորություն են ստանում երկրաշարժեր առաջացնող ակտիվ խզվածքների և նրանց մակերեսային դրսևորումների ուսումնասիրությունները:

Մինչ Սպիտակի երկրաշարժը գերիշխող էր այն կարծիքը, որ Կովկասում հնարավոր չէն շատ ուժեղ երկրաշարժեր, առավել ևս՝ մակերեսային խախտմամբ: Այդ վտանգի թերագնահատման արդյունքն էին նաև Սպիտակի 1988թ. երկրաշարժի կործանարար հետևանքները:

### Գործնական նշանակությունը

Իրականացված աշխատանքի արդյունքների ճնշող մեծամասնությունն ունի գործնական նշանակություն: Նշենք դրանցից մի քանիսը ընդհանրացված.

- սեյսմիկ կատալոգի ժամանակային շարքի ընդլայնում, հիմնականում ուժեղ երկրաշարժերի տվյալներով,
- երկրաբանական վտանգավոր երևույթների քանակական գնահատումներ,
- ակտիվ խզվածքների ակտիվության և նրա երկրորդային ազդեցությունների հետ կապված բնական վտանգների գնահատման մակարդակի հիմնավորված բարձրացում:

### Աշխատանքի գիտական նորությունները

Բացահայտվել են ՀՀ և հարակից տարածքների լարվածային դաշտի առանձնահատկությունները, ցույց է տրվել ընդհանուր հյուսիս-հարավ սեղմման պայմաններում ժամանակային և տարածական փոփոխականությունը:

Նևաերկրաշարժագիտական հետազոտություններով ապացուցվել է, որ ներմայրցամաքային ակտիվ խզվածքների համար, որոնց շարքին են դասվում Հայաստանի Հանրապետության տարածքի ակտիվ խզվածքները, բնորոշ են կրկնելիության երկար ժամանակահատվածներ և տեղաշարժերի համեմատաբար ցածր արագություններ:

Բացահայտվել է, որ Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքի (ՓՍՍԽ) երկայնքով, ի տարբերություն շարժման հորիզոնական կինեմատիկայի, ուղղաձիգ բաղադրիչը փոփոխվում է ըստ սեզոնների: Այն փոփոխական է նույնիսկ միևնույն սեզոնների սահմաններում:

Հայտնաբերվել է, որ ՓՍՍԽ-ի երկայնքով 7 տեղանքներում տեղի են ունեցել հնախախտումներ (մակերեսի պատռվածքներ), որոնք հնարավորություն են տվել ըստ հնատեղաշարժերի եզրահանգել 7 խոշոր ինդիվիդուալ հնաերկրաշարժերի կայացման մասին, երբ երկրաշարժի ուժգնությունը անցել է 7.0-ից ( $M_w > 7.0$ ): Չնայած ՓՍՍԽ-ի հյուսիսային սեզոնների երկայնքով հայտնի չէին շատ ուժեղ երկրաշարժեր, հնաերկրաշարժագիտական ուսումնասիրությունները վեր են հանել մակերևույթի խախտումներ հնատեղաշարժերով և արդյունքում առավելագույն

մագնիտուդը 6.2-ից (1187թ.) հասավ  $M_w \geq 7.4$ : Հարավային Խոնարհասարի սեզմենտի համար, երբ բացակայում էին վստահելի տվյալներ, այն գնահատվեց  $M_w > 7.3$ :

Բացահայտվել է, որ երկրաշարժածին խզվածքի տարածման առումով, ՀՀ տարածքում առանձնացված երկրաչափական սեզմենտները կարող են չհանդիսանալ երկրաշարժային սեզմենտներ: Ակտիվ խզվածքների վերադրման վարքի մոդելը առավել համապատասխանում է Հայաստանի Հանրապետության տարածքի ակտիվ խզվածքներին (ՓՄՄԽ-ի օրինակով): Համաձայն այդ մոդելի, ուժեղ երկրաշարժերը տեղի են ունենում բնութագրիչ մագնիտուդներով, տեղաշարժի արագությունները փոփոխական են, գրանցվում է նաև սեզմենտների (մակերեսային խախտումների) վերադրում:

Մարոկոյում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում կազմվել են Ալ-Հոսեյմայի շրջանի ակտիվ տեկտոնիկայի և հողերի ջրիկացման վտանգների քարտեզներ, որոնցում ներգրավվել են նոր հայտնաբերված խզվածքներ և սեզմենտներ: Ապացուցվել է նրանց ակտիվությունը: Մակերեսային խախտման ներուժի տեսակետից ՀՀ, Մարոկոյի, Հայիթիի տարածքներում իրականացված հնաերկրաշարժագիտական հետազոտություններն ապացուցեցին ուսումնասիրված ակտիվ խզվածքների քափաբլ (մակերեսային խախտում առաջացնելու ունակ) լինելու հանգամանքը:

Առաջադրվել է Սպիտակի երկրաշարժի ժամանակ երկրորդային մակերեսային խախտման մոդելը՝ երկրաշարժի ժամանակ գոյացած խախտման հարթության խզվածքավորման ուսումնասիրության հիման վրա:

Կատարվել են կոնկրետ բացահայտումներ՝ ակտիվ խզվածքների աշխատանքով պայմանավորված երկրորդային երկրաբանական վտանգների արտահայտություններ: Ցույց տրվեց կոնկրետ սողանքների սեյսմիկ ծագումը: Եզիպտոսի Ամենհոթեպ III տաճարում հնաերկրաշարժագիտական հետազոտությունները հնարավորություն տվեցին հայտնաբերել ինդիվիդուալ հնաերկրաշարժեր, մասնավորապես՝ նրանց երկրորդային ազդեցության հողերի ջրիկացման հիման վրա:

## Աշխատանքի փորձառականությունը

Աշխատանքի առանձին դրոյթները ներկայացվել են բազմաթիվ կոնֆերանսներում և աշխատանքային հանդիպումներում (Международный митинг МАГАТЭ, Ереван, 2010; Конференция, посвященная памяти С.Ачигезяна. Ереван, 2001; Тектоника и Геодинамика континентальной литосферы. Тектоническое совещание. Москва, ГЕОС, 2003; Connaissance tectonique et sismotectonique de la segmentation des failles en surface, FORPRO, CNRS Montpellier, France, 1998; Conf. EUG 10, Strasbourg, 1999; International conference: Problems of geomorphology and tectonics in the Alp-Himalayan mountain zone. Yerevan, 2001; International Symposium MEBE, Paris UPMC déc 2007; International Colloquium, 2010 Mubarak Public Library Luxor, Egypt; "Problems

of Geology of the Caucasus”, Tbilissi, 2010; DARIUS programme Milan workshop, Milan, Italy, 2012; Colossi of Memnon international conference, Luxor, Egypt. 2012; An example of international cooperation in the Caucasus. American Geological Union, San-Francisco, 2012 և այլն):

Թեմայի վերաբերյալ հրատարակվել են երեսունից ավելի աշխատություններ հայրենական և միջազգային, այդ թվում՝ առաջին կարգի գիտական ամսագրերում (5 հոդված տեկտոնիկայի ասպարեզում առաջատար համարվող “Tectonophysics”-ում): 6 հոդվածներ տպագրվել են միջազգային գիտական ժողովածուներում:

### Պաշտպանվող դրույթները

1. Մայրցամաքային բախումից հետո երկրադինամիկ դաշտն ունեցել է փոփոխական զարգացում՝ պահպանելով լարվածային դաշտի գլխավոր առանցքների ընդհանուր կողմնորոշվածությունը:
2. Երկրաշարժամետ գոտիներում մակերեսային խախտումները կարող են հանդիսանալ տեղանքի երկրաբանական գործընթացների կինեմատիկայի և դինամիկայի մասին վկայող տեղեկատվության կրիչներ, որոնց վերլուծությունը ցույց է տալիս բնական վտանգի առավել բարձր մակարդակ:
3. Մակերեսային խախտումները, երկրակեղևի մերձմակերեսային մասում բացահայտելով ծագումնաբանությունը, կայացած սեյսմիկ իրադարձությունների ուժգնությունը և դրսևորումների ժամանակները, ունենում են կինեմատիկ բազմազանություն, որոնց ճշգրիտ որոշումը նպաստում է բնական վտանգի աստիճանի առավել օբյեկտիվ գնահատմանը:
4. Իրականացված ուսումնասիրությունները հաստատում են բազմաթիվ մակերեսային խախտումների առկայությունը և ակտիվ խզվածքների երկրորդային ազդեցությունները բոլոր նշված երկրների (Հայաստան, Մարդկո, Եգիպտոս, Հայիթի) ուսումնասիրված տարածքներում:
5. Սեյսմիկ վտանգի գնահատման և սեյսմիկ վտանգի քարտեզի կառուցման ժամանակ պետք է ցույց տրվեն մակերեսային սեյսմածին խախտումները և նրանց երկրորդային ազդեցության տարածման արեալները:

### Շնորհակալություն


Շեղինակն իր հատուկ շնորհակալությունն է հայտնում երկրաբանական գիտությունների դոկտոր Ա.Կարախանյանին և Սոնտպելլիե 2 Համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Հ.Ֆիլիպին, որոնց հետ տարիների համատեղ դաշտային հետազոտությունների որոշ արդյունքներ ընդգրկված են աշխատանքում: Շնորհակալություն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, երկրաբանական գիտությունների դոկտոր Ռ.Ջրբաշյանին, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ երկրաբանական գիտությունների դոկտոր Ռ.Մելքոնյանին, դոկտոր Ս.Ֆիլիպ-Ռեբային, Սոնտպելլիե 2 Համալսարանի դոկտոր Զ.Ռիցին, երկրաբանական գիտությունների թեկնածուներ Ժ.Ստեփանյանին,

Ռ.Տայանին, Հ.Շահինյանին՝ կարևոր խորհրդատվության և աջակցության համար: Հեղինակն իր երախտագիտությունն է հայտնում երկրաբանական գիտությունների թեկնածու Ռ.Միրջանյանին, որի հորդորներն ու միջամտությունը նպաստեցին սույն աշխատանքի ներկա տեսքով կայանալուն:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում նաև ընդհանխոսներին, առաջատար կազմակերպությանը՝ աշխատանքը քննելու պատրաստակամության համար, ինչպես նաև ԵԳԻ կոլեկտիվի բոլոր անդամներին, ովքեր նպաստեցին աշխատանքի կայացմանը:

**Գլուխ 1. Երկրաբանական ընդհանուր տեղեկություններ Հայաստանի Հանրապետության և հարակից տարածքների մասին**

Առաջին գլխում բերվում են երկրաբանական ընդհանուր տեղեկություններ Հայաստանի Հանրապետության և հարակից տարածքների երկրաբանական և կառուցվածքային առանձնահատկությունների մասին: Այն ներառում է ժամանակակից տեղեկություններ տարածաշրջանի տեկտոնական զարգացման պատմության, տեկտոնա-շերտագրական միավորների, ակտիվ տեկտոնիկայի (նկար 1) և նրանց սեյսմիկ արտահայտվածության առանձնահատկությունների մասին:




Նկար 1. Արաբական սալից հյուսիս ակտիվ տեկտոնիկան (ըստ Philip et al., 1989; Avagyan et al., 2005), 1. հիմնական կողաշարժերը; 2. հիմնական վրաշարժերը; 3. Եվրասիայի համեմատ բլոկների հարաբերական շարժումները; 4.  $M_w > 4.8$  երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմները (CMT Harvard); 5. գործիքային սեյսմիկությունը  $3 < M_b < 4.9$  (USGS-NEIC): Ar. Հայաստան, D. Դագեստան, T. Թալիշ, E.A.F. Արևելա Անատոլական խզվածք, N.A.F. Հյուսիս Անատոլական խզվածք, P.S.S.F. Փամբակ-Սևան-Սյունիք խզվածք, Z.F. Զագրոսի խզվածք, N.T.F. Հյուսիս Թավրիզի խզվածք, G.S.F. Ժելտառեչկա-Սարիղամիշ խզվածք:



**Գլուխ 2. Տարածաշրջանի երկրադինամիկ դաշտի օրինաչափությունները**

Երկրորդ գլխում մուլտիդիսցիպլինար մոտեցմամբ քննարկվում են տարածաշրջանի երկրադինամիկ դաշտի օրինաչափությունները՝ հաշվի առնելով երիտասարդ (բնորոշվող ակտիվ խզվածքներով, GPS տեղակայման, երկրաշարժերի P առանցքների տվյալներով), երիտասարդ և հնալարվածային (բնորոշվող հրաբխային կլաստերներով, միկրոխզվածքներով, ծալքավորմամբ) դաշտերը:

Տեկտոնական լարվածա-դեֆորմացիոն դաշտի ցուցիչները (նկար 2) ցույց են տալիս մասշտաբային և ժամանակային փոփոխություններ, կապված հիմնականում Հարավ հայկական բլուխի և Եվրասիական եզրի, այնուհետև Արաբա-Եվրասիական կոլիզիաների զարգացման հետ:



Նկար 2. a-Սեղման առանցքի հորիզոնական բաղադրիչը ըստ միկրոտեկտոնական (1) և հրաբխային կլաստերների (2) տվյալների: b- սեղման առանցքի վարդի դիագրամայում, դիտարկված տարբեր հասակի երկրաբանական ֆորմացիաներում:

Ծալքավորումից, խզվածքների կինեմատիկայից և հրաբխային կլաստերներից բխող ընդհանրական հյուսիս-հարավ (N-S) սեղման առանցքի առկայության պայմաններում գոյություն ունեն երկրորդային՝ հյուսիս արևմուտք-հարավ արևելք (NW-SE) և հյուսիս արևելք-հարավ արևմուտք (NE-SW) առանցքները: Վերջիններս առավել ազդեցիկ են եղել առանձին տեկտոնական զարգացման փուլերում և նրանցով պայմանավորված կառույցներն այնուհետև ազդել են հետագա լարվածադեֆորմացիոն դաշտի ձևավորման վրա: Առաջինը ավելի նշանակալից է եղել ուշ Պալեոգենում և վաղ Միոգենում, իսկ երկրորդն ուշ Միոգեն-Չորրորդականում: Հավանաբար այս շրջանում տեկտոնական ռեժիմը փոխվել է հիմնականում կոմպրեսիոնալից՝ (compressional (thrusting and reverse faulting)), արտահայտված հիմնականում վրաշարժերով և վերնետներով, դեպի տրանսպրեսիվ

և տրանստենսիոն կողաշարժերով (transtension-transpression producing strike-slip faulting): Վերջինիս արդյունքում, սկզբնապես ուղղաձիւն մոտ Պոնտիդ-Փոքր Կովկաս լեռնաշղթաները և կառույցները ենթարկվեցին օրոգեն ճկման, պայմանավորված Հարավ հայկական բլոկի դեպի հյուսիս շարժմամբ:

### Գլուխ 3. Մակերեսային խախտումների բացահայտումը. Հնա-երկրաշարժագիտական հետազոտություններ

Երրորդ գլխում քննարկվում են մակերեսային խախտումները, նրանց բացահայտման, ծագումնաբանության և մեկնաբանման հետ կապված խնդիրները: Տրվում է մակերեսային երկրորդային խախտման մոդել՝ Սպիտակի երկրաշարժի համար: Բերվում են մակերեսային խախտումների տեղադրվածության մասին նկարագրություններ, տրվում են նրանց ժամանակային և մագնիստոլոգիային քանակական ցուցանիշներ: Ուսումնասիրությունների հիման վրա բնութագրվում են ակտիվ խզվածքների վարքը (Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքի օրինակով): Հիմնավորվում է նշված համալիր ուսումնասիրության անհրաժեշտությունը բնական վտանգների թերագնահատումներից, ինչպես նաև գերագնահատումներից խուսափելու համար:


Ներգամաքային տարածաշրջաններում երկրաշարժերի կրկնելիության միջակայքերը կարող են հասնել տասնյակ դարերի, երբեմն գերազանցելով պատմագրական ժամանակահատվածը: Դրանից էլնելով պատմական և գործիքային սեյսմիկության տևողությունը հաճախ բավարար չէ խզվածքների ակտիվությունը բնութագրելու համար: Հնասեյսմաբանությամբ ստացված արդյունքներով, սեյսմիկ իրադարձությունների շարքը ընգրկում է մի քանի հազար տարի ավելի ժամանակահատված և, ինչն ամենակարևորն է, հայտնաբերված երկրաշարժերը գնահատվում են 7.0 մագնիստոլոգի բարձր:

Մակերեսային խախտման սկարպերի անուղակի հասակագրմանը զուգահեռ դրվել են նրա ուղղակի գնահատման հիմքերը՝ Սպիտակի 1988թ. երկրաշարժի օրինակով: Սկարպի հողմնահարման չափագրումը հետագայում հնարավորություն կտա ստանալ դիֆուզիայի գործակիցը (K) Վալասի սկարպի դիֆուզիոն դեգրադացիայի համար:

Հնաերկրաշարժագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՓՄՍԽ բոլոր սեզմենտների (բացառությամբ Մոավ սեզմենտի, որի համար հնաերկրաշարժերի տվյալներ չեն ստացվել և որի համար հայտնի է միայն 1139 թվականի ավերիչ երկրաշարժը) երկայնքով, վերջին 9000 տարվա ընթացքում, տեղի են ունեցել հնախախտումներ, երբ երկրաշարժերի մագնիստոլոգ անցել է 7.0 -ից: ՓՄՍԽ-ի հյուսիսային երեք սեզմենտների երկայնքով մինչ այդ հայտնի չէին շատ ուժեղ երկրաշարժեր: Հնաերկրաշարժագիտական ուսումնասիրությունները վեր հանեցին մակերևույթի խախտումներ՝ հնատեղաշարժերով: Ապացուցվեց ուժեղ

երկրաշարժերի առկայությունը ոչ վաղ երկրաբանական անցյալում, ուստի և նրանց բարձր հավանականությունը մոտակա երկրաբանական ապագայում (նկար 3):

Ապացուցված կարելի է համարել, որ Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքի (բացառությամբ Մոավ սեզմենտի), ինչպես նաև Գառնիի խզվածքի հարավային և հյուսիսային սեզմենտները մակերեսային խախտումներ են առաջացրել (այսինքն քափար խզվածքներ են): Ապացուցվել է նաև Սարոկոյի, Ալ Չոսեյնա շրջանի մի շարք խզվածքների և Հայիթիի Պորտո Պրինս մայրաքաղաքի տարածքում հայտնաբերված ակտիվ խզվածքների սեզմենտների քափար բնույթը:



Նկար 3. Պատմագրական և գործիքային տվյալներով (ըստ Նոր-Ատոմ 2010 կատալոգի (Seismic Hazard Assessment, 2011)) և հնաերկրաշարժագիտական տեղաշարժերի տվյալներով ՓՍՍԽ-ի չորս սեզմենտների առավելագույն մագնիտուդները (Avagyan, 2001; Philip et al., 2001):

Ուսումնասիրման արդյունքները ցույց են տալիս, որ երկրաշարժածին խզվածքների տարածման առումով, ՀՀ տարածքի ակտիվ խզվածքները իրենց չեն դրսևորում որպես երկրաշարժային սեզմենտներ (գոյություն ունի խախտումների տարածում հարևան սեզմենտների երկայնքով): Տեղաշարժերը Փամբակ-Սևան-Սյունիքի և Գառնիի խզվածքներով կատարվում են առավելապես կոսեյսմիկ տեղաշարժերի միջոցով:

Ինչպես պարզ դարձավ ուսումնասիրությունների արդյունքում, Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքի տարբեր սեզմենտները դրսևորում են տարբեր հորիզոնական շարժումների արագություններ: Տեղաշարժի արագությունները փոփոխվում են նաև Հայաստանի այլ ակտիվ խզվածքների տարբեր սեզմենտների սահմաններում: Բերրիմանի և Բիկլանդի կողմից առաջարկված ակտիվ խզվածքի վարքի մոդելներից միայն երկուսն են բավարարում այդ պայմաններին՝ բնութագրիչ երկրաշարժի մոդելը և վերադրման մոդելը: Համաձայն բնութագրիչ մոդելի, խզվածքները հիմնականում միտում ունեն առաջացնել մագնիտուդի թույլ փոփոխման (~0.5) սահմաններով երկրաշարժեր: Այնուամենայնիվ, բնութագրիչ երկրաշարժի մոդելը պահանջում է, որ երկրաշարժերը կրկնվեն սեզմենտի սահմաններում, ուստի վերադրման մոդելը ավելի լավ է համապատասխանում Հայաստանի Հանրապետության ակտիվ խզվածքների վարքին: Համաձայն այդ մոդելի ուժեղ երկրաշարժերը տեղի են ունենում բնութագրիչ մագնիտուդներով, սակայն

տեղաշարժի արագությունները փոփոխվում են և գրանցվում է սեզմենտների վերադրում:

Խախտումների օրինակները ցույց են տալիս նրանց մեկնաբանման հետ կապված ղեկավարությունները: Մակերեսային խախտումների մեծ մասը, հատկապես ժայռային կամ կապակցված ապարներում գոյացած վերնետների դեպքում և ուղղաձիգին ոչ շատ մոտ խզվածքի հարթությամբ վարնետների դեպքում, կինեմատիկայով հիմնականում արտացոլում են խորքային իրադրությունը: Սակայն բերված օրինակները շատ դեպքերում վկայում են նրանց թվացյալ բնույթն, ընդ որում, այն կարող է արտահայտված լինել տարբեր կինեմատիկ իրավիճակներում: Գոգարանի տեղամասի դեպքում ունենք ուղղաձիգին մոտ հարթությամբ վարնետային բաղադրիչով կողաշարժ՝ ձախակողմյան սեզմենտավորմամբ, իսկ Մեմյոնովկայի տեղամասում ուղղաձիգին մոտ հարթությամբ և թույլ արտահայտված վարնետային ուղղաձիգ բաղադրիչով կողաշարժ, որի օգտին է խոսում սեղմման կատարների ձևավորումը: Երկու տեղանքների խրամուղիներում դիտարկվում է միմյանց նման, թվացյալ վերնետային բաղադրիչ: Նման պատկեր է դիտարկվում նաև Օուտսարի տեղամասում: Ֆիոլետովոյի տեղամասում ավելի բարդ իրավիճակ է, ուր բլուրների առանցքներն ունեն հիմնականում աջ սեզմենտավորում և սպասվող վերնետի փոխարեն խրամուղիներից մեկում դիտարկվում է վարնետ:

Գոգարանի տեղամասի խրամուղում խախտման հարթության դեպի հարավ անկումը մակերեսի մոտ իրականում համապատասխանում է թվացյալ (apparent) վերնետային խզվածքին: Թվացյալ խզվածքի հարթության անկման վրաշարժին մոտ վերնետ դիտարկվել է նաև Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքի Խոնարիասարի սեզմենտի երկայնքով:


Հետադարձ վերլուծությունը հնարավորություն տվեց առաջարկելու զարգացման հերթականություն, որը բացահայտում է իրական կինեմատիկան: Խզվածքի հարթությունը մերձմակերեսային հատվածում ընդունելով մերձուղղաձիգ դիրք, նրա աշխատանքի II-րդ փուլում բարձրացած թևը մղվում է դիմացի ազատ տարածք և ծանրության ուժի ազդեցության տակ իջնում ներքև՝ ծածկելով իջած թևը: Այսպիսով ուղղաձիգ կամ ուղղաձիգին մոտ վարնետային խզվածքի և՛ փուխր, և՛ վատ կապակցված գրունտների դեպքում հնարավոր է դառնում մակերեսին ունենալ թվացյալ վերնետային պատկեր:

Ի տարբերություն Գոգարանի, Մեմյոնովկայում իրականացված խրամուղու մեջ հնարավոր եղավ ակնադիտորեն արձանագրել մերձուղղաձիգ խախտման հարթության կորացում և թվացյալ միջին և փոքր անկմամբ վերնետային խախտման ձևավորում՝ դրանով հաստատելով Գոգարանի տեղամասի համար արված ենթադրությունը:

Կողաշարժային լարվածային ռեժիմում խզվածքագոյացման ժամանակ առաջացած Ֆիոլետովոյի բլուրները (նկար 4) իրենցից ներկայացնում են սեղմման կատարներ, նրանց դասավորությունն աջ էշելոնային է (չհաշված արևմուտքից 3-րդ

բլուրը), ի տարբերություն Գոգարանի տեղանքում դիտարկվածի: Աջակողմյան տեղաշարժի հետ համադրմամբ այստեղ սեզմենտները պետք է աջակողմյան կողաշարժի հետ ունենան վերնետային բաղադրիչ, սակայն ի հակառակ դրան այստեղ բլուրներն եզրավորող խախտումներից մեկի վրա փորված երրորդ խրամուղում դիտարկվեց վարնետային խզում, իսկ առաջինում, որը գտնվում էր որոշակի հեռավորության վրա՝ լարվածության դաշտի հետ համահունչ վերնետային խզում:

Ֆիոլետովոյի տեղամասի (նկար 4) համար առաջարկվեց խախտման մոդելներ, ըստ որի բլուրները եզրավորող խախտումները մակերեսի մոտ կամ երկրորդային վարնետներ են, կամ թվացյալ վարնետներ:



Նկար 4. Ֆիոլետովոյի տեղամասի խզվածքի գոնան եռաչափ մոդելում (a) և քարտեզում (c) (1-վարնետ; 2- վերնետ; 3- կողաշարժ; 4- բլուկի բարձրացում), առաջարկվող խզվածքի մոդելների բլոկ դիագրամները (b): 1- բլուրների առանցքները; 2- սեղմման տարածաշրջանային առանցքը; 3- խզվածքի գոտին (Avagyan, 2009):

Սպիտակի խախտման հարթությունների վրա դիտարկվող քերծվածքավորման ուսումնասիրմամբ հնարավոր դարձավ կինեմատիկ և դինամիկ վերակառուցումների հիման վրա վերակազմել խախտման գործընթացը Սպիտակի կենտրոնական սեզմենտի վրա և առաջարկել երկրորդային մակերեսային խախտման մոդել: Վերլուծվել է Սպիտակի 1988թ. երկրաշարժի խզման կենտրոնական սեզմենտի հարթության տարբեր ձևերի և կողմնորոշման քերծվածքավորումը: Այն թույլ տվեց վերականգնել մակերեսային խզվածքի պատման ընթացքը և վեր հանել նրա երկակի մեխանիզմը: Նախնական քերծվածքավորումները առաջացել են երկրորդային մակերեսային խզման հարթության վրա, մինչև հիպոկենտրոնային խզման մակերես դուրս գալը և չեն համընկնում գումարային տեղաշարժի ուղղության հետ: Հետագա քերծվածքավորումները առաջացել են հիպոկենտրոնային խզման մակերես դուրս գալու ժամանակ: Նրանց վրա վերադրված ավելի ուշ քերծվածքավորումը հետևանք է դինամիկ լարվածության փոփոխությունների:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուժեղ սեյսմիկ իրադարձության ժամանակ խզվածքի հարթության վրա հնարավոր է դիտարկվեն քերծվածքավորումներ, որոնք կտարբերվեն հիպոկենտրոնում գրանցված և արդյունքային տեղաշարժի վեկտորներից: Սա վկայում է երկրաբանական միջավայրի, կոնկրետ մակերևույթի ձևախախտման բարդությունների մասին, ոչ միայն երկրաբաժանվետ փուլում, այլև ակնթարթային դրվագներում:

Տեկտոնական երկրաշարժերը, պայմանավորված ակտիվ խզվածքներով, ունեն վստահ կրկնելիություն: Որոշակի միջերկրաշարժային ժամանակային տիրույթում կուտակվող լարվածությունները ապարների դիմադրողականության սահմանը գերազանցելիս նորից կառաջացնեն խախտումներ և երկրաշարժեր: Սակայն հրաբխականությամբ պայմանավորված խախտումների գոյացումը կապված է հրաբխային ակտիվության կրկնելիության հետ: Մոնոգեն հրաբխականության դեպքում հրաբխածին երկրաշարժը տեղի կունենա միայն նրա ակտիվության ժամանակ և այլևս չի կրկնվի, այսինքն այս դեպքում երկրաշարժերի վտանգը վերանում է:

Ելնելով խնդրի կարևորությունից ուսումնասիրվել են 22 տարածքի հրաբխային ակտիվությամբ հարուցված, նաև գրավիտացիոն ծագման խախտումների օրինակներ՝ ներկայացված հրաբխածին ցամաքային ու լճագետային նստվածքներում և լավաներում: Խախտումների կինեմատիկաները և տարածման օրինաչափությունները ցույց են տալիս նրանց ծագման կապվածությունը հրաբխային կառույցների շրջանաձևության և նրա կենտրոնի նկատմամբ տեղադիրքի հետ՝ հաճախ ցույց տալով տարբեր, երբեմն ռադիալ-համակենտրոն բախշվածություն, կապված հրաբխային կառույցի ձևավորման կամ փլուզման հետ: Դրանցից լավագույնները ներկայացվել են Եղվարդի և Շամիրամի սարավանդների հրաբուխների օրինակներով: Այստեղի խախտումները հիմնականում փոքր տեղաշարժերով վարնետային են, սակայն դիտարկումները ցույց տվեցին վերնետների առաջացման հնարավորություն, որոնք առանց երկրաբանական կառուցվածքային ստուգաբանության, կարող էին շփոթեցնել և վերագրվել տեկտոնական ծագման: Վերլուծությունները ցույց տվեցին նրանց կոմպենսացիոն և ռոտացիոն բնույթը նույն հրաբխածին միջավայրում:

Նախաժայթքման տեղանքի դեֆորմացիաները, մագմայի տեղաշարժման միկրոցնցումները և նրա ժայթքման հիմնական ցնցումները փոխազդելով ծանրահակ ուժի հետ հանգեցնում են դիտարկված ոչ տեկտոնական հրաբխածին դեֆորմացիաների:

Արագածի լանջերին դիտարկված ճեղքավորումները, զարգանում են դայկայի գագաթային մասի ընդարձակման գոնայի և մակերևույթի փոխազդեցությամբ: Մրանք, տարածվելով հրաբուխների լանջերին, ձևավորում են օղակաձև խզում, որոնք որպես կանոն ունեն մեծ անկումներ: Դիտարկված ճեղքերի կամ խախտումների սահմանափակ երկարությունը և ակնհայտ կապը դայկաների

ներդրման հետ նրանց դասում է հրաբխածինների շարքին: Մրանք ըստ էության օղակաձև խզվածքի առանձին սեգմենտներ են:


#### Գլուխ 4. Երկրաշարժերի անուղակի ազդեցությունները

Այս գլխում բերվում են միջավայրի վրա երկրաշարժերի անուղակի ազդեցության բացահայտված օրինակներ, մասնավորապես սողանքների և հողերի ջրիկացման և հնարավոր երկրաշարժ-հրաբուխ տրիգերային կապերի վերաբերյալ: Ցույց է տրվում, որ մակերեսային խախտումների և ուղեկցվող երկրաշարժերի հետ կապված վտանգը պետք է վերլուծվի համալիր ձևով, հաշվի առնելով միջավայրի վրա նրանց ազդեցությունները:

Անչափ կարևոր են ակտիվ խզվածքների ակտիվությամբ հրահրված երկրորդային երևույթները՝ սողանքները, փլուզումները, հողերի ջրիկացումը և հնարավոր հրաբխային ակտիվացումը: Լանջային ծանրահակ գործընթացները բերում են հսկայական տնտեսական վնասներ և մարդկային զոհեր: Մասնավորապես սողանքները հանդիսանում են մշտական և մեծամասշտաբ վտանգ, հատկապես լեռնային սեյսմաակտիվ երկրների համար:

Ակտիվ տեկտոնիկայի տեսանկյունից առավել հետաքրքրական են այն սողանքները, որոնք հրահրված են երկրաշարժերով:

Նկար 5. M7.5 մագնիտուդով երկրաշարժի համար սողանք առաջացնելու առավելագույն հեռավորությունը մակերեսային խզվածքից ըստ Կեֆերի (Keefer, 1984, 2002) համարյա 200կմ է, մինչդեռ Մարտունու սողանքի լեզվակը գտնվում է Փամբակ-Սևան-Սյունիք ակտիվ խզվածքից մոտ 14կմ հեռավորության վրա, իսկ սողանքի թիկունքային գլխավոր սկարպերը՝ ընդամենը 4-5կմ հեռավորության վրա:



Հաճախ խզումների բացակայության պայմաններում սեյսմածին սողանքները դառնում են վճռորոշ օբյեկտներ հնասեսյամաբանական ուսումնասիրությունների համար: Նման մոտեցումով ուսումնասիրվել է Գառնու մեծ սողանքը: Այդուհանդերձ, ընդհանուր առմամբ գոյություն ունի էական տարբերություն հնասեսյամաբանական խախտումների և սողանքների ուսումնասիրությունների միջև: Առաջին դեպքում

ուսումնասիրության առարկան կոնկրետ խզման ակտիվության պատմությունն է, երկրորդ դեպքում՝ սեյսմածին սողանքի տարածքի ցնցումային պատմությունը: Աշխատանքում Հայաստանի, Հայիթիի, Մարոկոյի տարածքներից բերված օրինակներով ցույց են տրված սողանքների և ակտիվ խզվածքների հաճախակի հարևանությունը: Եվ՝ Գառնիի, և՛ Մարտունու սողանքների օրինակներով (նկար 5) ապացուցված է նրանց սեյսմածնությունը կամ սեյսմածին լինելու մեծ հավանականությունը:

ՀՀ տարածքում նպատակային ուսումնասիրություններ չեն իրականացվել հողերի ջրիկացման ուղղությամբ, երբ դինամիկ պայմաններում փոխվում է գրունտի վիճակը, անցնելով ամուր, կայուն վիճակից ջրիկ անկայուն վիճակի: Այնուամենայնիվ դրանք շատ հնարավոր են երիտասարդ ավազակավային ջրհագեցած նստվածքներում, որոնք առկա են Արարատյան, Շիրակի, Սևանի ավազաններում և այլուր: Առավել նա, որ կան պատմական նկարագրություններ 1840թ. երկրաշարժի ժամանակ Արաքսի հովտում դիտարկված երևույթների մասին, որոնք նույնանում են հողերի ջրիկացման հետ:

Շատ կարևոր է ցույց տալ հողերի ջրիկացման սեյսմիկ ծագումը և չջվողել նախապես առաջացած ճեղքերով մակերեսային ջրային հոսքերի տարածման, սողանքային և արտեզյան պայմաններում առաջացող օբյեկտների հետ:

Եգիպտոսի Ամենհոթեպ III տաճարում հնաերկրաշարժագիտական հետազոտությունները հնարավորություն տվեցին հայտնաբերելու հնաերկրաշարժեր, մասնավորապես նրանց երկրորդային ազդեցության՝ հողերի ջրիկացման հիման վրա: Իրականացված բազմաթիվ խրամուղիներում, հորերում և դիտարկված մերկացումներում հայտնաբերվեցին սեյսմիտներ, ապացուցվեց նրանց սեյսմիկ ծագումը և հասակագրումներով ցույց տրվեց առնվազն մեկ երկրաշարժի ժամանակային ինտերվալը:

Մարոկոյում իրականացված նմանատիպ հետազոտությունների ժամանակ ապացուցվեց, որ 2004 թվականի երկրաշարժից հետո Միջերկրածովյան ակումբի ճանապարհի ճեղքվածքը, որը սխալմամբ ընդունվել էր որպես մակերեսային խախտում, իրականում հողերի ջրիկացման արդյունք էր: Կից կառույցների հատակների ճեղքավորումները ունեն տարբեր ազիմուտներ, սակայն հստակ բացատրվող տեղադրվածություն և կոնստրուկտիվ բնույթ. համապատասխանում են բետոնյա կոնստրուկցիաների տարբեր հզորություններով պայմանավորված հանգույցներին, ուստի և տարբեր ծանրության մասերի սահմաններին: Դա հետևանք է նրանց հիմքը կազմող ավազների, որոշակի խորություններում հողերի ջրիկացման, կառույցների բեռի առկայության պայմաններում մակերեսի ձևախախտումների:

Ռիաս գետի անմիջապես գետաբերանի մոտ դիտարկված հողերի ջրիկացման հետևանքով առաջացած սեյսմիտների ուսումնասիրությունը և հասակագրումը ցույց տվեց, որ այն կարող է լինել 1775թ. Լիզբոնի ավերիչ երկրաշարժի կամ 1969թ. հզոր երկրաշարժի արդյունք:



## Եզրակացություն


Հայաստանի Հանրապետությունում առավել ռիսկային են երկրաբանական վտանգները, որոնց թվում՝ նաև երկրաշարժերը: Վերջինները կապված են ակտիվ խզվածքների հետ և միայն նրանց վարքի ուսումնասիրմամբ է հնարավոր հասկանալ սպասվելիք վտանգի չափի և ռիսկերի նվազեցման աշխատանքների բնույթի և ծավալների մասին: Միջավայրի վրա ակտիվ խզվածքների ազդեցությունների և մերձակերեսային դրսևորումների ուսումնասիրությունը հանդիսանում է կարևոր երկրաբանական խնդիր:

Օալբավորումից, խզվածքների կինեմատիկայից և հրաբխային կլաստերներից, երկրաշարժերի P առանցքների 7 GPS վեկտորներից բխող ընդհանրական հյուսիս-հարավ (N-S) սեղմման առանցքի առկայության պայմաններում գոյություն ունեն երկրորդային՝ հյուսիս արևմուտք-հարավ արևելք (NW-SE) և հյուսիս արևելք-հարավ արևմուտք (NE-SW) առանցքները: Վերջիններն առավել ազդեցիկ են եղել առանձին տեկտոնական զարգացման փուլերում և նրանցով պայմանավորված նորագոյացած կառույցներն այնուհետև ազդել են հետագա լարվածադեֆորմացիոն դաշտի ձևավորման վրա: Երկրաբանական զարգացման ընթացքում, մայցամաքային բախումից հետո, երկրադինամիկ դաշտն ունեցել է փոփոխական զարգացում՝ պահպանելով լարվածային դաշտի գլխավոր առանցքների ընդհանուր կողմնորոշվածությունը:

Երկրաշարժամետ գոտիներում մակերեսային խախտումները կարող են հանդիսանալ տեղանքի երկրաբանական անցյալի գործընթացների կինեմատիկայի և դինամիկայի մասին վկայող տեղեկատվության կրիչներ, որոնց վերլուծությունը ցույց է տալիս առավել բարձր վտանգի մակարդակ: Հնաերկրաշարժագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՓՄՄԽ բոլոր սեզմենտների (բացառությամբ Մոավ սեզմենտի, որի համար հնաերկրաշարժերի տվյալներ չեն ստացվել) երկայնքով վերջին 9000 տարվա ընթացքում տեղի են ունեցել հնախախտումներ, երբ երկրաշարժերի մագնիտուդը անցել է 7.0 -ից: Խզվածքը իր ամբողջ երկայնքով դրսևորում է հորիզոնական աջակողմյան տեղաշարժի կինեմատիկա, մինչդեռ նրա ուղղաձիգ բաղադրիչը փոփոխական է (վերնետից վարնետ):

Հայաստանի Հանրապետության տարածքի ակտիվ խզվածքների վարքին առավել լավ համապատասխանում է վերադրման մոդելը (ՓՄՄԽ-ի օրինակով): Համաձայն դրա, ուժեղ երկրաշարժերը տեղի են ունենում բնութագրիչ մագնիտուդներով, սակայն տեղաշարժի արագությունները փոփոխվում են և գրանցվում է սեզմենտների վերադրում:

Մակերեսային խախտումները իրենց մերձակերեսային մասում, բացահայտելով ծագումնաբանությունը, կայացած սեյսմիկ իրադարձությունների ինտենսիվությունները և դրսևորումների ժամանակները, ունենում են կինեմատիկ բազմազանություն, որոնց ճշգրիտ որոշումը նպաստում է բնական վտանգի



2037

աստիճանի առավել օբյեկտիվ գնահատմանը: Բացահայտվեցին խախտումների կինեմատիկաների հնարավոր թվացյալ բնույթները, տրվեց Սպիտակի 1988թ. մակերեսային խզվածքի պատման ընթացքի մոդելը և վեր հանվեց նրա երկակի մեխանիզմը: Սկզբնական փուլում երկրի մակերեսին ձևավորվեց խախտում, որի կինեմատիկան տարբեր էր խորքային խախտման կինեմատիկայից՝ բացահայտված ֆոկալ մեխանիզմով: Այդ ժամանակ դեռևս խորքային խախտման ճակատը չէր տարածվել մինչև երկրի մակերես:

Տարբեր ծագման երկրաշարժերի և նրանց առաջացնող կառույցների իմացությունը կարևոր է, քանի որ նրանք ունեն տարբեր մագնիտոտոլոգային ներուժ և կրկնելիություն: Հրաբխածին երկրաշարժերը իրենց ուժգնությամբ զգալիորեն զիջում են հրաբխատեկտոնական և, առավել ևս, տեկտոնական ծագման երկրաշարժերին, ուստի կարևոր է երկրաշարժածին կառույցների ճանաչողությունը՝ վտանգի գերազնահատումներից խուսափելու համար: ՀՀ-ում դիտարկված հրաբխածին խախտումների զգալի մասը ըստ էության սեյսմածին են (առաջացել են ցնցումներից), սակայն չեն հանդիսանում սեյսմածին կառույցներ (seismogenic structure) (ինչպես օրինակ տեկտոնական խախտումները), որոնց ակտիվությունը առաջացնում է երկրաշարժեր:

Սեյսմիկ վտանգի գնահատման և սեյսմիկ վտանգի քարտեզի կազմման ժամանակ պետք է ցույց տրվեն մակերեսային սեյսմածին խախտումները և երկրաշարժերի երկրորդային ազդեցության տարածման արեալները: Դրանցից առավել նշանակալիցը սողանքներն են: ՀՀ տարածքը գտնվում է սեյսմաակտիվ գոտում, ուստի սողանքները, եթե նույնիսկ սեյսմածին չեն, կրել և կրելու են երկրաշարժերի ազդեցությունը: ՀՀ, Հայիթիի, Մարոկոյի տարածքներում հաճախակի են սողանքների և ակտիվ խզվածքների հարևանությունը, ուստի հավանական է նրանց տրիգերային կապը: Գառնիի սողանքի օրինակով ապացուցվեց նրա սեյսմածին բնույթը և ցույց տրվեց այլ սողանքների սեյսմածին լինելու մեծ հավանականությունը:

Եգիպտոսի Ամենհոթեպ III տաճարում հնաերկրաշարժագիտական հետազոտությունները հնարավորություն տվեցին հայտնաբերելու հնաերկրաշարժեր, մասնավորապես՝ նրանց երկրորդային ազդեցության՝ հողերի ջրիկացման հիման վրա: Նմանատիպ ուսումնասիրություններով հաստատվեցին հողերի ջրիկացման երևույթների առկայությունը Մարոկոյի Ալ-Հոսեյմայի շրջանում:

Սեյսմիկ վտանգի գնահատման և սեյսմիկ վտանգի քարտեզի կառուցման ժամանակ պետք է ցույց տրվեն մակերեսային սեյսմածին խախտումները և նրանց երկրորդային ազդեցության տարածման արեալները:

## Ատենախոսության թեմայով հրատարակումների ցանկ

1. Կարախանյան Ա., Ավագյան Ա., Ավանեսյան Մ., Բաղդասարյան Հ. Մոդալներ. թերազնահատված վտանգ: Գիտության աշխարհում, Երևան, 2007, 3, ISSN 1829-0345, էջ 50-58:
2. Ավագյան Ա.Վ. Տեկտոնական խախտումների մերձավերջային երկրաչափական բարդացումները Հայաստանի Հանրապետության տարածքի օրինակով: ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, Երևան, 2011, N1, էջ. 3-16:
